




« ԲՈՂ ՏՈՒՔ ԾՈՒՐ ՏՆՈՑ ՈՐ ԻՆՏ ԳՈՒՆ » ԿՈՒՎ. ԵՐ. 46:

ՀԱՏՈՐ ԺԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ԹԻՄՈՍՈՍ Լ. 1882

ԹԻՒ 8



ՈՐՁԱՆ ԻՆՉՊԵՍ ԵՐ ՇԵՆՈՒԻ

Մեր ընթերցողներէն շատերն հաւանականապէս տեսած են արձան, այսինքն քարէ շինուած պատկեր մարդոյ: Յոյնք հին Ժամանակները շատ անուանի եղան յարձանագործութեան, այնպէս որ գեղեցկագոյն և պատուականագոյն քարէ պատկերք որ կան յաշխարհի՝ նախնի Ժամանակներէ հասած են մեզ:

Բայց ի՞նչպէս կը շինուի արձան: Ամէնքս գիտենք որ արձանն այլևայլ գործեր կը կտրուի մեծ կտոր մտրամարինէ: Ղարմանալի է սակայն որ ճարտարագոյն անգրիպործն անգամ դուն ուրեք կտուռ ձեռքը կուսն անձամբ կտրել քարը, այլ ինք կը շինէ արձանին օրինակը, և քարակտրք այն օրինակին համեմատ կը շինեն արձանը: Մեղքիպործը, այսինքն բուն արուեստագէտը որ կուզէ գեղեցիկ պատկեր մը շինել քարէ, նախ անոր օրինակը կը շինէ կուս: Կուսնու մեծ կտոր մը թոյց կամ կակուղ կուս, և հետ գհեակ սեղցներով անոր վրայ կտոր կտոր կուս կը շինէ արձանին օրինակն, ինչպէս կը տեսնուի պատկերին ձախակողմը: Երբ կուս օրինակը կը շինուի, ոչ թէ իսկ և իսկ բուն քարէ արձանը կը կտրուի, այլ կուս օրինակին նման ուրիշ արձան մը կը շինուի գոճէ որ քան վրանն աւելի կարծր է և չի ճաթբուսիր, ինչպէս կը ճաթբուսիր կուս չորնալէն ետքը: Գուսնէ արձանը շինելու հա-

մար կաւ է օրինակը իբրև կարգապար (հար) կը դործածուի, և այն կարգապարին մէջ կը թափուի գաճը ջրի կամ լոյծ : Գաճէ արձանին ձուլուելէն ետքը, ազնիւ տեսակ մարմարինն երկայն կտոր մը կ'առնուի, և կը դրուի պատուանդանի մը վրայ, ինչպէս կը տեսնուի պատկերին աջ կողմը : Գաճէ արձանին վրայ կը տեսնուին փոքրիկ նշաններ, որ չափի համար են : Քարակտին այս նշաններուն նմանը կը գծէ մարմարինին վրայ, ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ : Յետոյ կը սկսի կտփել, այսինքն կուտնով տաշել քարը, ստէպ չափերով ճշգիւ և զգուշութեամբ օրինակին վրայ, մինչև մարմարինը կ'առնուրատ ամենայնի կաւէ կամ գաճէ օրինակին ձևը և կերպարանքը :

ՄԵԾԱՐԱՆՔԸ ԶՈՐ ԱՇԽԱՏԻ

Կ'ԸՆԾԱՅԷ ԿՐՈՆԻ

Հետեւեալն է երկրորդ պատմութիւն մը որ կը ցուցնէ թէ Քրիստոսնէութեան առաւելութիւնը կը խստովանին անոնք իսկ որ Քրիստոսնեայ չեն :

Ամերիկայի նշանաւոր գաղտնորդներն մին կ'ըսէ թէ, իւր երիտասարդութեան առնէ կրօնական խնդրոյ վրայ կը կատարէր, և ազնուական մարդ մը, զոր կը մեծարէր իբրև հայր, կը ջանար անոր ընդունել սոյ անհաւատական գաղափարներ զորս ինք ունէր : Այն ազնուականն ունէր կին մը, որ էր բարեպաշտ կին : «Ազնուականը» կ'ըսէ երիտասարդը, «պատուիրեց ինձ որ չգիտցունեմ իւր կնոջ թէ ինք անհաւատ էր : Հարցուցի անոր թէ ինչու չգիտցունեմ կնոջը : Մարդը պատասխանելով այս հարցման ըսաւ որ եթէ չարիւր անգամ ամուսնանայ, կ'ուզէ ամուսնանալ բարեպաշտ կնոջ մը հետ : Վասն զի ըսաւ, «եթէ կին մը Քրիստոսնեայ է, կ'ըլլայ լաւ ուղի կին, լաւագոյն մայր, լաւագոյն գաղտնորակ և լաւագոյն գրայի : Եթէ ազգաւ է կինը, բարեպաշտ Քրիստոսնէութիւնը կ'օգնէ անոր համբերութեամբ սանել ձախարհութեան : Եթէ կինը հարուստ է և յաջող վիճակի մէջ, Քրիստոսնէութիւնը կը նշուազեցունէ անոր փափաքը լոկ ցոյցի համար հագուելու շքուելու : Եւ երբ այսպիսի կին մը մեռնի, եթէ սխալ ըսած ալ է իւր հաւաքին մէջ, քնատ մը չկրէր, այլ կը մեռնի կ'երթայ ինչպէս ես և դուն, բայց եթէ մենք սխալած ենք, նա կ'ըլլայ հազարապատիկ լաւագոյն քան զմեզ» : Հար-

ցուցի ազնուականին թէ, եթէ Քրիստոսնէութիւնը սուտ է, արդեօք ինք կը ճանչնար ուրիշ սուտ կրօնք մը որ այսպիսի օրհնութիւն բերէ : Այս հարցման այնպիսի պատասխաններ տուաւ որ գոհացուցիչ չէին : Բայց անոր խօսքն առաջնորդեց զիս խնդիրը քննելու ինձի համար : Յաճախ կը յիշեմ այն խօսակցութիւնը, որ կենացս կարեւորագոյն զեպքերէն մին եղաւ և առաջնորդեց զիս Սուրբ զիբըր խնամով կարգալու, և քննելու Քրիստոսնէական կրօնին ազացոյցներն : այս, այն խօսակցութիւնն եղաւ պատճառ որ ունեցոյ կենդանի հասարակ փոխարկուի մը :

Կրնայինք արիւ շատ այսպիսի օրինակներ մէջ բերել, բայց այս երկուքը միայն բաւական կը համարինք ցուցնելու համար թէ աշխարհ ինչ մեծարանք կ'ընծայէ կրօնի :

ՎԱՅՐԻ ԵՆԱԿՆԵՐ

Ներսէսի զինուոր մը զիւղ մը եկաւ, որ յանկարծ հիւանդանալով այլ ևս չկրցաւ ճամբորդել, և ստիպուեցաւ պատկիւ հիւղի մը մէջ յարգել վրայ, և կրել շատ նեղութիւններ : Ազգաստ ստարաստործի մը Ազաթա անուն փոքրիկ աղջիկն որ շատ ազնիւ և կարեկից սիրա ունէր, ի դուր շարժեցաւ ինչ՞ զինուորին վրայ, և առնէ օր անոր այցելութեան երթալով ասանական փարսա կուտար : Բայց մի երեկոյ առաքինի զինուորն հարցուց Ազաթայի . «Սիրուն աղջիկ, այսօր խնայոյ թէ քու ծնողքդ ազգաստ են, ուրեմն, սոցոյը պատմէ ինձ, ո՛ւտարի կ'առնուս ստակը զոր ամէն օր կը բերես ինձ : Կ'ընտրեմ յաւեա մեռանիլ անօթի քան ընդունիլ մի նաքարակիւ» որ մաքուր խղճով և արդար աշխատութեամբ շահուած չէ : «Այդ մտտին անհանդիստ մի ըլլաք» ըսաւ Ազաթան, «ստակն օրինաւոր վատակ է : Սո՛ մտակոյ զիւղը պարզը գոյրոյ կ'երթում : Ճամբան կ'անցնի անասուն, ո՛ր անասան վայրի ելակ (չիլէք) կոյ, և ես ամէն օր մի սաղոտ լեցուն ելակ ժողովելով կը փաճառեմ զայն տասը փալայի, և ստակը կը բերեմ ձեզ : Ծընողքս այս գործիս հաճած են, և կ'ըսեն թէ կան քան զմեզ ազգաստոցոյն շատ մարդիկ որոնց օգնելու պարտական ենք որտա կրնանք» : Այս խօսքերուն վրայ ծերունի զինուորին աչքերէն արտասուք վազեցին վիրաւորեալ այտերէն վար : «Քարի աղջիկ, ըսաւ ծերունին, «քու ազնիւ սրտիկ և բարի գործիք համար Աստուած զքեզ և ծնողքդ պիտի օրհնէ» :

Ժամանակ մը ետքը բարձրաստիճան պաշտօնեայ մը կը ճամբորդէր Ազա-

թայի զիւղէն : Պաշտօնեայն հանդիսաւ առնելու համար կեցաւ զիւղին պանդոպին տաջև, և հոն լսելով հիւանդ զինուորին վրայ, անոր այցելութեան դնաց : Ներսէսի զինուորն պատմեց փոքրիկ աղջկան բարեբարութիւնը : «Ի՛նչ», գոչեց պաշտօնեան, «եթէ ազգաստ աղջիկ մը այդչափ շատ բաներ ըրաւ քեզի համար, ես որ քու հին զորավարը եմ կրնամ պակաս ընել» : Այս ըսելով կանչեց պանդոպին տէրն և անոր պատուիրեց ազէկ հող տանել զինուորին և խոստացաւ ծախքը հատուցանել : Յետոյ պաշտօնեայն Ազաթայի ծնողաց խրճիթը դնաց, և տեսնելով ազնուասիրտ աղջիկն ըսաւ . «Քու բարեբարութեանց պատմութիւնը սիրտ շարժեց և աշուքներս ուրախութեան արատուօք լեցուց : Գու ծերունի զինուորին շատ տար փարանոցներ տուած ես, այժմ ո՛ւտ այն տար փարանոցներուն փոխարէն սակի գրամներ» : Աղջկան ծընողքը զարմացմամբ ըսին . «Ի՛նչ, այս շատ տեղի է» : Բայց զորավարը յարեց . «Այս շատ նախ փոխարինութիւն է ձեր ազնիւ աղջկան բարի գործին» :

Ազաթա որ իւր բարի գործին վարձըն առած էր իւր խղճին բարի վրկայութեամբ, կրկին վարձատրուեցաւ զորավարին ստատածնուն նուէրով :

Այսպէս առաքինութիւնը նոյն իսկ այս աշխարհի մէջ կը վարձատրուի : Սիրելի՛ աղայք, գուք ալ ունիք Ազաթայի բարի զգացումն և կարեկցութիւնն առ կարօտեալս : Եթէ ունիք, երանելի էք, զի ձեր վարձքը շատ պիտի լինի յերկինս : Ազաթայի նման աստ ևս պիտի վարձատրուին ձեռն շտակին :

ԱՌՄԱՆԻԵՆՍ ՄԱՏԱՆԻՆ

(ԹՈՒՐԿԵՆԵՆ ԽՐԳՆԱՆՈՒՄ)

Ժամանակաւ ծեր մարդ մը տեսնելով իւր մահը մտա, կոչեց երեք որդիքը և բաժնեց անոնց ինչ որ ունէր, պաշեց միայն մատանի մը առ կանակապ, ըսելով . «Ձեռն ով որ, մինչև երեք ամիս, կը կատարէ մեծ առաքինական գործ մը, անոր կուտամ այս մատանին» :

Երեք ամիս ետքը այն երեք որդեոյ մին, Յարութիւն անուն, գալով ըսաւ հօրը . «Հայր, օտարական մը զոր ամենին չէի ճանչնար՝ իւր բոլոր ստացուածքը յանձնելով ինձ, առանց ձեռնադիր մը առնելու ինէ գնաց, և յետ աւուրց ինչ գալով պահանջեց առնալը, և ես հաւատարմութեամբ տուի բոլորը . միթէ առաքինական մեծ գործ չէ այս» : «Որդեակ», ըսաւ հայրը, «գու՛ն ըրիւր ինչ որ

պարտէիք, մեծ ամօթ պիտի ըլլար քեզ հակառակը գործել. արդարութիւն ընել մարդաս պարտքն է, ուստի գուն պարտք մը կատարեցիր:

Յետոյ եկաւ երկրորդ որդին որոյ անունը Սամուէլ էր, և ըսաւ, «Հայր, անցեալ ամիս օր մը կը պտտէի մեր լճին եզերքը. յանկարծ ազայ մը որ հոն կը խաղար, դիպուածով ինկաւ ջուրը, և ես իսկոյն նետուելով լիճը՝ ազատեցի սղան. եթէ ես չընէի այս օգնութիւնը, աղան ստուգիւ պիտի մեռնէր: Արդ, ո՛չ ապաքէն առաքինական մեծ գործ է այս, արժանի գովեստի:» «Ազնիւ, որդեակ,» ըսաւ հայրը, «չա՛տ ապրիս. գիտցիր սակայն որ այսու կատարած ես մարդասիրական գործ մը միայն և ոչ աւելի:»


Ի վերջոյ եկաւ երրորդ որդին Մովսէս որ կրասերազոյնն էր, և ըսաւ, «Հայր իմ, անցեալ օր տեսայ որ թշնամի Յովսէփ անդունդի մը եզերքը պտտեցած կը ջրնանար: Տեղն այնպէս վտանգաւոր էր, որ եթէ Յովսէփ քիչ մը շարժէր դէպ յաջ կամ ի ձախ, պիտի զրոյէր անգունդը և կատր կտոր պիտի ըլլար: Թշնամեոյս կեանքն իմ ձեռքս էր. կից մը զարնելով կրնայի

խարհէս: Քան զամենայն առաքինի գործ պատուական է արգարե սիրել զիմ նամիս, անյիշաչար ըլլալ, նա մանաւոր փոխանակ չարի հատուցանել անոնց բարիս: Եթէ այս ողւով ապրիք, երբ, յետ մահուան, ելլէք ձեր երկնաւոր Հօր առջև, ձեր երկնաւոր Հայրը պիտի համբուրէ զձեզ, և այն պատուական պատկերէն մին պիտի դնէ ձեր զրուխը: Ձեռնէ ո՛վ արդեօք պիտի ունենայ այնպիսի պատկ մը ընդունելու. բարեբախտութիւնը:

Իէսայ 3. 9. ՊԻՒՂՊԻՒՂԵԱՆ

ԵՐՈՒՍԱԳԵՄԻ ՍԵՆՏԱԿ

Երուսաղեմի երեւելի շինուածներուն մէջ նշանաւոր է Ուէտզմինադէրի արքայաբանն ի լինանն: Այս շէնքին մէկ



ԵՐՈՒՍԱԳԵՄԻ ՍԵՆՏԱԿ

գահավէժ ընել թշուառականը և վրէժս առնուլ. բայց այնպէս չըրի, այլ մօտենալով անոր մեզմով, բռնեցի թեւէն, և արթնցունելով առի մէկգիւ: Ի՛նչ կ'ըսես, հայր, անյիշաչարութիւնը զոր ցուցի Յովսէփայ, ո՛չ ապաքէն առաքինական մեծ գործ է, և գովելի:» Հայրը գովելով իւր կրասեր որդւոյն այս գործը, համբուրեց զնա ըսելով, «Ազնիւ, բարի և գովելի որդեակ, գու ես արժանի ականակապ մատանոյն,» և զայս ըսելով դրաւ մատանին տղան մատը:

Տեսէք, սիրելի ազգայր, ի՛նչ մեծանձնութեամբ Մովսէս արժանի եղաւ այն մեծազին պարզեկին զոր պատրաստած էր հայրը: Այսպէս ձեր երկնաւոր Հայրն ունի պատրաստ քան զամենայն աղամանդեայ զարդ. անգին և պատուական պատկերներ զորս պիտի տայ իւր որդիներէն անոնց որ բարի և առաքինի գործերով կ'երթան աշ-

մապը շինուած է իւր հազար երկու հարիւր տարի առաջ: Շէնքն է աւելի քան 500 ոտք երկայն և 200 ոտք լայն: Եղուարդ թաղաւորէն հետէ (30/42) Անդղիոյ բոլոր թաղաւորք և թաղաւոր հիւր պատկերներն այս Արքայաբանը, և հոն է անոնց շատերուն գերեզմանը. հոն են նաև գերեզմանը երեւելի Անդղիոյ գոթապետայ, զիտնոյ և մատենադրոց շատերուն: Այս շէնքին մեծամեծ սրահներէն մին կը կոչուի «Սենեակ Երուսաղեմի,» և պատմութիւնն արժանի է յիշուելու: Սենեակն առած է այս անունը, վասն զի Քիչարս Բ. ի ժամանակ (1377) այս սրահին պատերը զարդարուած էին ծածկոյններով որոց վրայ նկարակերտ յօրինուած էր պաշարման Երուսաղեմի: Այս ծածկոյնները վերջուած են հիմա, բայց սենեակին առունը կը մնայ: Մեր պատկերը կը ցուցնէ այս սենեակն, ուր կրակա-

րանին վրայ գրուած են Սուրբ գրոց սա համարները.

«Ազօթեցէք Երուսաղեմի խաղաղութեան համար:»

«Շինէ Երուսաղեմի պարիսպները:»

«Վերին Երուսաղեմն ազատ է:»

Հենրիկոս Գ. այս արքայաբանին մէջ յանկարծ հիւանդանալով (1443), տարուեցաւ այն սենեակը, վասն զի այն սենեակը միայն ունէր կրակաւորան: Երբ թագաւորն անձին զրաց, հարցուց թէ ուր էր: «Տէր,» ըսին, «Երուսաղեմի սենեակն էք:» «Ուրեմն,» ըսաւ թագաւորը, «պիտի չաւաղանամ: Երբ մանուկ էի, ըսուեցաւ ինձ թէ Երուսաղեմ պիտի մեռնէի, և ես կը կարծէի թէ պատեւրազով երթալով սուրբ երկիրը, պիտի մեռնէի այն սուրբ քաղաքը, բայց հիմա կը տեսնեմ որ մօտ եմ վախճանիս և հոս պիտի մեռնեմ:»

Երեւելի եկեղեցական ժողովներ եղած են շատ անգամ այս սրահին մէջ, և Անդղիոյ եկեղեցւոյն մէջ գործածուած սրբապրեալ աղօթագիրքը շարադրուած է հոս: Այս սրահին մէջ եղան մօտ տարիներս ժողովք սրբագրութեան Անդղիերէն Աստուածաշունչին: Վաւերացեալ կոչուած Անդղիերէն

Աստուածաշունչին թարգմանութիւնը որ կը գործածուի բոլոր աշխարհի վրայ ուր կը խօսուի Անդղիերէն, և զաւ. Յակոբոս Բ. թագաւորին ժամանակ (1603—1611): Անդղիերէն լեզուն շատ փոխուած է այն ժամանակէն հետէ, ուստի և երեւելի Անդղիոյ գիտուններէն ոմանք քանի մը տարի է որ կ'աշխատէին Աստուածաշունչի նոր Անդղիերէն թարգմանութիւն մը պատրաստել: Այս գիտունք իրենց ժողովներն բրին Այս սրահին մէջ, և թարգմանութիւնը տարի մը առաջ աւարտեցաւ: Եթէ սենեակը կամ տեղին ուր Հայերէն Աստուածաշունչը թարգմանուեցաւ՝ գիտցուէր, անշուշտ կը պահուէր ինամով, ինչպէս որ Ռէսպոնսներէ Երուսաղեմայ սենեակին յիշատակը պիտի մնայ անեղձ և անմուսայ շատ երեւելի գիպաց համար որ հոն կատարուած են:

ՄԱՏԱՆԵՄԱՏՆ

Օր մը մատանեմառը զարգարուեցաւ մարգարտեայ թանկագին մատանեաւ, որ ախանակիւ չրի վրայ չողացող արեգական ճառագայթի պէս կը փայլէր։ Այս զարդին համար մատանեմառը սկսաւ հպարտանալ և միւս մատերուն հետ բան մը ընել չէր ուզեր վասն զի կը խորհէր թէ ինք այն մատերէն շատ գերազանց էր։ Միւս մատերը յոյժ բարկացան մատանեմառին այս ընթացքին համար, և բոյժ մասն բաւ։

«Եթէ դուն մեզի հետ բան չունիս, մենք ալ քեզի հետ բան չունինք»։ Այս պէս մտտերն երեք օր իրարու հետ չիտսեցան։ Վերջապէս մատանեմառն ուզեց ծաղիկ մը քաղել։ Բայց բոյժ մասն բաւաւ անար, «Քեզ պիտի չօգնեմ, քանզի դուն հպարտ ես» և ծաղիկը չքաղուեցաւ։

Գարձեալ մատանեմառն ուղեց ճիւղէ մը կեռաս մը վրայնէր, բայց միւս մատերը չէին ուզեր օգնել անոր, և կեռասը ծառին վրայ մնաց։ Ուրիշ օր մը մատանեմառը դուրսը հիւսել ուղեց բայց առանց միւս մատերուն օգնութեան չէր կրնար հիւսել։

Յայնժամ յիմար մատանեմառը առնաւ որ ինքնիրեն բան մը չէր կրնար ընել և զաւերով իր ամարդի վարման վրայ ներս մ'իջնողընց, միւս մատերն ալ ներելով անոր օգնեցին, և ալ երբէք չփիճեցան։

Սիրելի տղայք, այս առակը մեծ ու կարևոր ճշմարտութիւն մը կը պատահակէ։

Ի բարանչիւր անհատ իրեն համար գործեր ունի, և այս գործերուն մէկ մասը կրնայ կատարել առանց այլոց օգնութեան, բայց կան նաև գործեր որ ընկերութեան գործեր են, և մարդոց իբր մի մարմին գործերով կրնան կատարուիլ։ Նոյնպէս և տրղայք ունին ընկերութեան վերաբեր-

եալ գործեր, որոնք ի մասին գործելով միայն կրնան կատարուիլ։ Ուստի, նոյնցեք որ չցաւցնէք մինչև իսկ ձեր տգէտ և աղքատ ընկերները, և յիշելով թէ շատ բաներու մէջ նոցա օգնութեան կարօտ էք, անոնց վրայ մի հպարտանալ։

Վարստան Չեր բարեկամը
Ա. Կ. ՍԻՒՍԱՅԻՐՅԱՆ

կը ստիպուին իրենց արօտասեղին փոխել, երամուկին ձերազոյնները, իբրև հմուտ և փորձ առաջնորդներ, կը տանին երամուկն ի խնդիր նոր արօտայ։ Երբևմն հազարաորներ կ'երթան սյուպէս երամ երամ խոնարհ հազոյն ջրարբի հովիտներ ուր դալար խտան առատ և համեղ է։

Այս սյժեմանց արշաւանքը որ իրենց ճարակ գտնելու նպատակով է, կը նմանցանեն անոնք մարտիներու առերիշ սյցերութեան, սա մեծ տարբերութիւնը կայ սակայն, որ այս ընթիկ Ափրիկեցի ապաւտակը կ'ընարեն միշտ սանայի տեղեր, մարդու աշխատութեամբ մակեալ և ծաղկեալ տեղերու ամենեին չեն մտենար։

Երբևմն նաև ոչ խարներու հօտ մը կը խառնուի այս սյժեմանց շտոյն, և կը ստիպուի երթալ առանց հետ և եթէ թափառական առիծ մը բոտ պատահման պաշարուի այս խիտ և բուռն բողմութեան հասանքին, կը ճնշուի տան կողմէ, և ուրիշ հնար չկայ անտառայ թաղաւորին, եթէ ոչ խոնարհութեամբ երթալ բողմութեան հետ, և կամ ըլլալ սոնակիւր։

Քաղաքավարական օրէնք մը կայ այս աղնիւ անասնոց բընութեան մէջ. երբ յառաջապահ ճամբան կ'ուանն բոտ բառականին և կը յազենան, տեղի կուտան վերջապահաց, որ յառաջ կ'անցնին, մինչև անոնք ալ յաղեցունեն իրենց քաղցր։ Այսպէս ստեղ փոխուելով ճամբան, ոչ որ կը մնայ անօթի նիհար, այլ ունենըր կ'ուանն, կը գերնան և կը պարարին։



ԱՓՐԻԿԵԻ ԱՅՆԵՄԱՏՆ

ԱՓՐԻԿԵԻ ԱՅՆԵՄԱՏՆ

Այս արտօդսան ստրճանդակայ հոյբերնիքն է հօրտու պին Ափրիկէ։ Այս սյժեմամբ շատ երկչատ է, և եթէ երբէք պատահի ճամբու մը ուստի մարդ գայած է, ճամբուն մէկ կողմէն միւս կողմը զատկելով կ'անցնի. եթէ շատ խրախի, կը զատկէ մէկ ոտովմը մինչև 43 սաք վեր։ Այս սիրուն անասնոց միայ շատ համեղ և բնախի է, և մարթը շատ բաներու կը գործածուի։ Երբ այս անասնը

մինչև անոնք ալ յաղեցունեն իրենց քաղցր։ Այսպէս ստեղ փոխուելով ճամբան, ոչ որ կը մնայ անօթի նիհար, այլ ունենըր կ'ուանն, կը գերնան և կը պարարին։

Ամերիկայի Մեխիկոնոսաց ընկերութեան կողմէն
Թմրագիր ձ. Բ. ԿԻՆՏ
Ֆիլիպան Տրար Կողմըն. Ամերիկան Խոն

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՆՈՐ ՊՅՅԱՆՅԱՆ